

քանը միայն գիտենք, որ Հաղթատայ Մեծ Ստիկասէսը ԵՃԸ (578+551=1129) թուին վախճանուեցաւ ինչպէս վկայում են Կիրակոս և Սամուէլ Անեցի պատմիչները և թաղուեցաւ Յարեւելից կուսէ մեծի եկեղեցւոյն առ դուրս փոքրագոյն եկեղեցւոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Համապասպ և շինեաց հրաշարի շինուած, ուր զգանգախն կախէին, յարմարեալ ի նմին և եկեղեցիս, ասում է Կիրակոս (65):

Նորա տապանի վերայ մինչև օրս էլ աշնեղծ մնում է հետեւեալ արձանագրութիւնը. «Արձանս այս սեմական է Ստիկաստոսի սարկաւապին»:

Յովհաննէս սարկաւազ վարդապետը, Հաղթատի կրօնական — գիտնական դպրոցի հիմնադիրը լինելով հանդերձ, նորա ամենանշանաւոր ուսուցիչն է ու ներկայացուցիչը և անշուշտ բաղմամբիւ պիտանի և բանիմաց մարդիկ է առել իւր ժամանակիցներին, որոնցից սակայն մի քանիսի անունները միայն յայտնի են մեզ այժմ, իսկ ոմանց գրուածքները մինչև այժմ էլ անյայտութեան մէջ են մնում:

Այդպէս օրինակ յայտնի է մեզ մառնանադիրներից, որ Յովհաննէս սարկաւազ վարդապետի աշակերտներն են եղել ամենից առաջ՝ Սամուէլ Անեցի ժամանակագիր պատմիչը, որ շատ կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում մեզ իւր ուսուցչի մասին:

Բ) Մի անգամ արդէն յիշուած Կուէդ Սարգիս վարդապետը, որ գրել է Յովհաննու և Ղուկասու աւետարանների մեկնութիւնը, օգտուելով ի միջի այլոց նաև իւր վարժապետի գրուածքներից:

Գ) Երեմիայ Անճրեիկ կոչուած, որից միայն այսքան է յայտնի թէ մի անգամ Սարկաւազ վարդապետը հրամայել է նորան լուս կենալ և նա երեք տարի շարունակ ոչ որի հետ չէ խօսել:

Յիշուում են նաև երեք այլ աշակերտներ, որոնց գործունէութեան և երկերի մասին, եթէ ունեցել են, ոչ մի տեղեկութիւն չունենք, այդ 3 հոգին են՝ Խաչատուր, Գրիգոր և Յովհաննէս Անեցի:

Կը շարունակուի).

Եր. ս.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՈՌԻՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Փետրուար ամսում Ռուսաց ս. Սինօզի արեւակած վճիռը, որով աշխարհահռչակ Լէվ Տոլստոյ բանագրութեամ էր իրրե գաւաճան մայրենի եկեղեցւոյ՝ զբաղեցնում է մինչև այժմ թէ՛ արտասահմանեան և թէ՛ ռուսաց մամուլը: ПЕРВ. ВѢСТНИКЪ 27 հունիսի Տոլստոյի ս. Սինօզին ուղղած պատասխանը մէջ բերելով՝ տալիս է մի քանի յօդուածներ բարձրաստիճան ռուս եկեղեցականների գրչից, իրրե հերքումն և բացայայտութիւն նորա սասանների, Այդ թեր ու դէմ գրութեանց մէջ աչքի է ընկնում մանաւանդ այն կետը, որ մինչ մեծ հեղինակը պատկառելի լրջութեամբ տասնեակ տարիներով որոճացած, ներքին երկարատե ծանր մաքառման միջոցով զտած մտքեր է յայտնում, իւր համար կենսական նշանակութիւն ունեցող սկզբունքներ դնում, հակառակորդները ըստ ժեծի մասին բառերի հետ են խաղում, առանց հաշիւ տալու իրենց, թէ արդեօք այն, որ իբրև եկեղեցւոյ ճշմարիտ դաւանութիւն բարձրահընչին արտայայտութիւններով պաշտպանում են իրենց հոգւոյ մէջ ևս ճշմարտութիւն է, կշառաւորել և զգացել են խորապէս նորա բուն արժէքը, Լարկաւ Տոլստոյի կարծիքները քրիստոնէութեան մասին ոչ մի դաւանութեան հետ չեն հաշտուում և մասնաւորապէս օրթոդոքս եկեղեցին տանել չէ կարող նորա կողմից իւր դէմ եղած յարձակումները, բայց նա իրաւամբ նկատում է, որ այդպիսի և դորանից շատ աւելի խիստ հայեացք ունեցել են ռուս գրողների և կրթուած դասի մեծագոյն մասը. արդեօքութիւնն այն է, որ ոչ դե նորա չափ լրջօրէն չի զբաղուել կրօնական — բարոյական խնդիրներով և նորա պէս խորը թափանցել հոգևոր կեանքին վերաբերեալ հիմնական ճշմարտութիւնների մէջ, Յամենայն դէպս ոչ դե կասկածել չի կարող, որ նա ամբողջ կեանքում ճշմարտութիւն է որոնել և կատարեալ անկեղծութեամբ է ասում իւր պատասխանի մէջ, թէ ճշմարտութիւնը իւր համար քրիստոնէութիւնն է, ինչպէս ինքն է հասկանում, և եթէ մէկը համոզւի, որ սխալուում է, և աւելի պարզ՝ նորա մտքին ու սրտին աւելի բաւականութիւն տուող հաւատոյ ճշմարտութիւն դներ նորա առաջ, այն կընդունէր, որովհետև Աստուծուն, բացի ճշմարտութիւնից, ոչինչ պէտք չէ: Ուստի խիստ ցաւալի և անախորժ է մի քանի հակառակորդների վարմունքը, որոնք աշխատում են կասկածաւոր դարձնել նաև նորա արդարամտու-

Թիւնն ու բարոյական արժանաւորութիւնը՝ զանազան նենգաւոր նպատակներ վերագրելով նորան և ամէն տեսակ լուտանք ուղղելով նորա հասցէին: Ինչպէս նա ինքն իւր պատասխանի մէջ ասում է, Սինոզի դատավճիռը ամբօխի մէջ տեղ տեղ մեծ ջայթիթ է զրգռել նորա դէմ, և նա սպառնական ու հայհոյական նամակներ է ստացել զանազան կողմերից: Դորա փոխարէն, երբ արտասահմանում խօսք է լինում ուսուց եկեղեցւոյ մասին և շատերը քարացած մեռած են համարում նորա մէջ բուն կրօնական կեանքը՝ Տոյստոյին են օրինակ բերում ցոյց տալու համար, թէ որչափ կենսունակութիւն կայ այստեղ:

— Ռուսաց Պաղեստինեան ընկերութիւնը կրկին մի մեծ նպաստ է ստացել կառավարութեան կողմից. Թագաւոր Վայսեր հրամանով 500,000 ռուբլի պարաք է տրուել նորան պետական գանձարներից հետզհետէ վերադարձնելու պայմանով: Գանձարանն արդէն տարեկան 30,000 ռ. նպաստ էր տալիս: Նոր ստացած գումարով ընկերութիւնը հնարաւորութիւն կունենայ մեծամեծ նոր շէնքեր կառուցանելու և ուսուսումնարանների համար արդէն եղած շէնքերն ընդարձակելու: Ինչպէս և կառուցանելու մի մեծ շէնք ուսումնարանների համար նազարէթում: որ արդէն ամիսներ առաջ սկսուած է: Ընկերութիւնը պահում է Պաղեստինում և Ասորիքում 82 ուսումնարաններ, 9625 աշակերտներով և մօտ 400 ուսուցիչներով. այլ և հինգ հիւանդանոց մեծ կենտրոններում: Առաջին դպրոցը 30 աշակերտով է մի ուսուցչով բացուել է 1882 թուին:

— Նիւ-Եորկում մայիսի 9-ին, Նիկողայոս Սքանչելագործի տօնի օրը, մեծ հանդիսով ուսուց եկեղեցւոյ հիմքն է դրուել, որն օրհնել է Ալէուտիայի և Լիւս. Ամերիկայի եպիսկոպոս Տիկտնը: Церк. Вѣстникъ մեծ կարեւորութիւն է ընծայում այդ հիմնարկութեան՝ արեւմտեան կիսաշխարհի գլխաւոր կենդրոնավայրում, որ կարող է ապագայում օրթոդոքս եկեղեցւոյ հաստատութեան և զարգացման խարխիս դառնալ Ամերիկայի համար:

— „Сибирь. жизнь“ հաղորդում է մի դէպք, որով երևում է թէ քահանան երբեմն ինչպէս մոռանում է սրբազան խորհուրդը և իւր կրքին է ծառայում:

Բայանաուլի մի աղքատ ընտանիքում կնուսքի ժամանակ կնքահայրը յայտնեց քահանային, որ ծնողաց ցանկութիւնն է մկրտեալին Ալեքսիոս կոչել: Քահանան յայտնեց, որ անունը Սոփրոնիոս պիտի լինի. Կնքահայրը կրկնեց ծնողաց ցանկութիւնը և թախանձեց չմերժել իւր խնդիրը, չգրուած քահանան ձայն չհանեց, և երեխան մկրտելիս անունը դրաւ Պուս. Տիրացուն իւր մեծից քաջալերուած անուանեց «իսկ թէ տասն գրուանքայ»։ Քահանան հիացաւ իւր տիրացուի սրամտութեան վե-

րայ և մի կուշտ ծիծաղեց, Այսպէս վրէժ լուծեցին իրենց հակառակորդներին:

— „С-Пет. Вѣд.“ հաղորդում է, թէ ինչպէս սիրահար են „Ниж. Новгородъ“-ում անհեթեթ հաստափոր սարկաւագների և աւագ սարկաւագների. Եկեղեցու յիշեալ կարգի պաշտօնեան ոչ մի յարգանք չի վայելի, եթէ իւր առասպելական հաստութեամբ և ահազանկոջ ձայնով չաղղի տեսողութեան և լսողութեան վերայ. Տիրացուն պիտի լինի՝ հոմերական չափով մեծ. նորա ձայնից պիտի ձայն տան ու զնգզնգան եկեղեցու ապակիները և պիտի դողան երեցփոխի սեղանի վերայ շահուց ու այլ սեփողից կանգնած սիւները. նորա մաղը առիւծի բաշից խիտ պիտի լինի. — ահա յիշեալ քաղաքի վաճառականաց և իրենց տիկնանց ճաշակը:

Յիշեալ երեւոյթը տարօրինակ ապաւորութիւն է թողել նոցա առաջնորդի վերայ (Սրբ. Նաղարիոս), որը տեսել է նոցա մէջ այնպիսիները, որոնք հաստութեան պառճառով չեն կարող գլուխ խոնարհել. նոցա ձեռքը գետին չի հասնում, երբ հարկ է լինում կռնալ, իսկ սովորական դրութեան ժամանակ իրարից այնքան հեռի են մնում, որ հնար չի լինում հեշտութեամբ բուրվառը մի ձեռքից միւսը անցկացնել:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Բողոքովին անսպասելի մի վտանգ սպառնում է վերջնականապէս խախտելու Վատիկանի զօրութիւնը. մինչդեռ Լեոն ԺԳ. զբաղուած է իւր շրջաբերականներով՝ ուղղուած իւր հպատակազգեսին, հէնց կաթոլիկ ժողովրդի միջին դարու սկզբից ի վեր՝ ծագել և զարգանում է մի շարժում, որ կրծում է պապական զօրութեան արմատը. Արդէն Գաղղիայի համար Պապը բողոքովին խորթացել է, Իսպանիայում և Պորտուգալիայում ժողովրդական հակաեղուիտական շարժումը փոխուում է հակակղերականի և գնալով նորանոր և անսպասելի կերպարանքներ է ստանում, նոյն իսկ հոգեւորականները Իսպանիայում զարթնում են քնից և հակապապական շարժման գլուխ անցնում, Բարեցնում, օրինակ, լոյս է տեսել նոր լրագիր «Մեր Տեսութիւնը», որ խիստ հակակղերական ուղղութեամբ բորբոքում է կրքերը. թերթի խմբագիրն է Լ. Որիսէյ, հոգեւորական աշխատակիցներով (նոցա թուում նշել իսկ եպիսկոպոսներ), Լրագրի նշանաբանն է յանուն կաթոլիկութեան մաքրութեան կոչել կղերականութեան դէմ: Սոցա ցանկութիւնն է հպատակել պապին միայն զաւանաբանական սահմանում, մնացեալում անկախ ազգային հոգեւորականութիւն պիտի լինի, որ ընտրուում է ժողովրդի ձայնով, և ոչ թէ նշանակուի իշխանութիւնից: Ժողովուրդը եկեղ. գործերում անմիջական մասնակցութիւն պիտի ունենայ և ոչ

Թէ անպայման ենթարկուի հոգևորականութեան ան-
սխալականութեան, Լրագիրը պահանջում է եզուի-
տական և այլ կարգերի՝ իսպառ բարձունք և նոցա
գոյքի յարքունիս գրաւումն։ Եթէ հոգևորակա-
նութիւնը այսպէս է, ո՛ր է հասնում աշխարհա-
կան գասի շարժումը։

Անցեալ շաբաթ Մադրիդում ժողով է եղել,
որ Իսպանական ժողովրդի համար ցարդ շտեմնուած
ու շխուած առեւտրութեամբ խօսել են հետադարձ
ընդդէմ կղերականութեան և նոյն իսկ աւելորդ հա-
մարել հոգևորականութիւնը։ Ժողովը վճռել է վե-
րացնել կրօնական կարգերը, որոնք պետական իշ-
խանութեան հակառակորդներ են և ստրկացնելով
իրենց անգամներին՝ դարձնում են հակաղղային և
հակակուլտուրական անհատներ։

Թաղմամբիւ փաստերով ապացուցուեց ժողո-
վում, որ կրօնական կարգերը փոխանակ հոգու-
փրկութեան մասին մասնաւոր՝ վաճառականու-
թեամբ և արդիւնաւորութեամբ են պարագում
և ճարպիկութեամբ դերծ են մտացել հարկերից և
մարսերից։

Ֆինանսների նախարարութիւնը կատաղի կոխ
է մղում կարգերի դէմ, որին օգնութեան են հաս-
նում լրագիրները, և առանց քաշուելու յայտա-
րարում որ կաթողիկոսութիւնը հակակրօնական սկզբ-
ունքներով է առաջնորդուում Գործնական կեան-
քում կաթողիկոսութիւնը շատ հեռի է Քրիստոսի
փարզապետութիւնից, երկրաւոր վայելքների, հա-
րըստութիւն և փառք՝ հոգևորականութեան միակ
հոգան ու զրաղմունքն է։ Կոմստրիսը անտես է
արւում, աւելացրու դորան և չղթայ և սուին, որ
քրիստոնէական լուծը ժողովրդի պարանոցին ղնելու
միակ միջոցն է ճանաչուում, այն ժամանակ կպար-
զուի թէ ինչ է կաթողիկոսութիւնը [El Pais]։

Աշքի առաջ ունենալով կրօնաւորական
կարգերի խաղացած մեծ դերը կաթողիկ եկեղեցւոյ
մէջ և մասնաւորապէս վերջին ժամանակ նոցա դոր-
ծունէութեան նկատմամբ յառաջացած կենդանի հե-
տաքրքրութիւնն ու տաք կոխները մի քանի եւրո-
պական երկրներում՝ արժէ ուշադրութեան առ-
նել, թէ որքան ներկայացուցիչներ ունին նոքա
հոգևոր բարձր իշխանութեան, եպիսկոպոսական
խմբի մէջ։ Եպիսկոպոսութեան աստիճան կամ
տիրոջն ունին կաթողիկ եկեղեցւոյ մէջ ընդամենը
1264 հոգի, որոնցից վերջին հաշիւների համաձայն
216 կրօն. կարգերի միջից են ընտրուած. բայց
եթէ հաշուենք նաև զանազան միախոնարական ըն-
կերութիւններ, որոնք այդ կարգերին շատ նման
կազմակերպութիւն և կանոնադրութիւն ունին և
որոնց անդամներից ևս 58 հոգի եպիսկոպոսական
աստիճանով պատուած են՝ բոլոր եպիսկոպոսների
մետ մի քառորդ մասը այդպիսի կարգերի ու ընկե-
րութիւնների անդամներ կլինին։ Սակայն աղբեցու-

թիւնը հարկաւ միայն թուից չէ կախուած, այլ և
նորանից, թէ որ երկրում են, ինչպիսի՞ դիրք ու-
նեն, թեմակալ են թէ լոկ տիրոջն աւոր այդ եպիս-
կոպոսները։ Օրինակ, եզուիտական կարգից միայն
8 եպիսկոպոսներ կան, բայց անշուշտ ամենակարեւոր
տեղեր են գրաւում։ Ամենաշատ եպիսկոպոսներ
ներկայացնում է Ֆրանցիսկեան կարգը՝ իսկական
թեմակալ եպիսկոպոսներ թուով 21, ապա Գոմի-
նիկեանները՝ 11, Կապուցինները 11, Օգոստինեան
ները 10, Բենիդիկտեանները 9 ևլն։

— Նոր հրատարակուած ցուցակի համեմատ
ներկայ քսաներորդ դարի սկզբում 257 նոր սրբա-
ցումների առաջարկութիւններ կային, որոց միայն
երկուսը ԺԳ, դարու զօրձողների են վերաբերում։
3-ը ԺԵ, դարու վերջին դարերի սուրբերի թիւը
գնալով աւելանում է, այնպէս որ միայն ԺԹ, դա-
րի վերաբերմամբ 132 առաջարկութիւն է ընկնում։
Սրբացման առարկայ եղող անձերից 231 կրօնաւորա-
կան կարգերին են պատկանում, 35 մնացած հոգևո-
րականութեան, 13 հոգի աշխարհական են, սոցանից
4-ը կոյս (զոցա թուում Ժաննա դ'Արկը), 3-ը
մայրեր, 2-ը թագուհի, Մարիա Ստիւարտ և Մարիա
Քրիստինէ (Սալոյիոյ թագուհի, վախճ. 1825 թ.)։

— Մօտ ժամանակներս Հռոմում մի առան-
ձին ընկերութիւն է կազմակերպուել «հաւատոյ
պահպանութեան» համար, Յունիսի 11-ին տեղի է
ունեցել ընկերութեան մեծ նիստը Պարոչի կարդի-
նալի նախագահութեամբ, որին ուղղուած պապի
թուղթը սխալուած էր այսխոսքերով. «Այն առաքե-
լական գութը, որ մենք տածում ենք շարունակ
Յիսուս Քրիստոսի մեղ յանձնած հօտի համար՝
հարկադրում է մեզ բոլորովին առանձին կերպով
հսկողութիւն գործ դնել Հռոմ՝ քաղաքի վերայ, որ
կաթողիկական հաւատոյ կենտրոնն է և մեր սեփա-
կան եպիսկոպոսութեան աթոռանիստը, Նրը մենք
ի մեծ ցաւ սրտի տեղեկացանք, որ մոլար հաւատոյ
գործակալները բազմանում են այստեղ, կրկնա-
պատկուած ուժերով աղատ քարոզութեամբ պարա-
պելու համար՝ անմիջապէս ձեռնարկեցինք այդ
կորստաբեր վտանգի առաջն առնելու, Իսկ վերջա-
րանն այսպէս է. «Թող հաճոյ լինի ողորմած Աս-
տուծուն, որ այս Հռոմը, Պետրոսի քաղաքը մար-
տիրոսների քաղաքը՝ անրաժան և անպարտելի պա-
հէ համասլիւղ սիրով հայրերի հաւատը, ո-
րին ուղղել է Պօղոս առաքեալն այն հրաշալի
խօսքերը (Հռոմ. Ա. 8).—«զի հաւատք ձեր
պատմեալ են ընդ ամենայն աշխարհ»։ Կարդինալի
տուած զեկուցման համեմատ ընկերութեանը յա-
ջողել է արդէն մրցակից դպրոցներ հիմնելով 2000
մանուկների խլել աղանդաւորների աղբեցու-
կից։

— 2ինաստանի ներկայ գրութեան լաւ ծա-
նօթ մի անձ Köln. Volkszeitung թերթում գրած

իւր յօդուածով առաջարկում է այդ երկրներում գործող քրիստոնէական առաքելութիւնների վերա-
յից վերցնել աշխարհական իշխանութեան խնամա-
կալութիւնը: Նորա ասելով փորձը ցոյց է տուել,
որ այդ առաքելութիւնները ծաղկած էին: քանի
դեռ աշխ. իշխանութեան խնամակալութիւնը չէին
փայլում. բայց հենց որ փրանսիացիք և պոր-
տուգալացիք սկսեցին իրրե միսիոնարների պաշտ-
պաններ շինական գործերի մէջ խառնուել, հալա-
ծանքը սկսուեց: Զինացիք ասում են այժմ քրիս-
տոնեաներին միայն նորա համար, որ նոքա եւրոպա-
ցիներ են կամ կապ ունին եւրոպացիների հետ:
միսիոնարները համարուում են իրենց պետութեանց
լրտեսները, և եւրոպական զօրքերը յետ քաշուե-
ցան թէ չէ՝ հալածանքը նորից կսկսուի: Նոցա դէմ
Թղթակիցը ցանկութիւն է յայտնում, որ պապը
Պեկինում ներկայացուցիչ ունենալով՝ մի տեսակ
հոգեւոր խնամակալութիւն յանձն առնէ բոլոր
քրիստոնեաների վերայ: Մի առանձին ներկայա-
ցուցիչ կարող էին ունենալ նաև բողոքականները:

— Հակակղերական շարժումն Սպանիոյ մէջ
գնալով զօրանում և աւելի ու աւելի ընդարձակ
ծաւալ է ստանում: Գրեթէ ամենօրեայ դարձած
փողոցային ցոյցերը տպաւորութիւն են գործել նաև
հարեան Պորտուգալիայի ժողովրդի վերայ. այնպէս
որ նոյնն այնտեղ ևս կրկնուելով՝ պատճառ է եղել
աքբայական հրովարտակ հրատարակելու եղուիտ-
ների և այլ կրօնաւորական կարգերի գործ զրած
զեղծումների դէմ: Թէպէտ կառավարութիւնն այս-
տեղ այնչափ թոյլ է, որ ոչ միջոց ունի և ոչ հնար
կրօն. կարգերի դէմ կռուելու, բաւական է միայն
յիշել, որ ամբողջ դպրոցական կրթութիւնը այդ
կարգերի ձեռքին է գտնուում և թէ՛ նոքա կամե-
նան՝ մի օրում պետութեան բոլոր դպրոցները կիս-
կուեն: Թէ ինչ սկզբունքներով են առաջնորդու-
ում հակակղերականներն այս երկրներում՝ կար-
գէ բաւականաչափ մի փոքրիկ քաղուածք Սպանա-
ցի մի քահանայի հրատարակած «Էլ—Ուրբինո»
թերթից, որի նշանաբանն է. «Մենք կաթոլիկ ենք,
բայց ոչ կղերական, այլ հակակղերական»: Նա մե-
ղադրում է եկեղեցական իշխանութեանը, որ թոյլ
չէ տուել իրեն կաթոլիկական ուսմունքը պաշտպա-
նել, արգելել է իւր գրուածները, առանց պատճա-
ռը յայտնելու. պարգեւատրել և առաջ է քաշել
այնպիսի եկեղեցական իշխանաւորների որոնց թըղ-
թերի մէջ յայտնուած հերետիկոսական կարծիքներն
ինքը ցոյց է տուել, պաշտպանել է նոցա, որոնց
պարբերաբար կատարած զեղծումներն ինքն երեւան
է հանել ու ապացուցել, Ապա 24 կէտերի մէջ ամ-
փոփում է ներկայումս կաթոլիկ եկեղեցւոյ ունե-
ցած պախարակելի կողմերը, գլխաւորներն են.—
ճշմարիտ աստուածապաշտութեան և խաչեցնալ
Փրկչի հետեւողութեան բացակայութիւն, չափա-

ղանցրած ու կռապաշտութեան հասնող սուրբե-
րի «սուրբ սրտի» և այլ սրբութիւնների պաշտա-
մունք, անկումն ճշմարիտ քրիստոնէական առաքի-
նութիւնների ինչպէս՝ արգարութեան, խոհակա-
նութեան, չափաւորութեան և դրա փոխարէն
կրօնական արարողութիւնների զօրանալը՝ թափո-
րներ, տներ, ծխախաւարութիւններ, որոնք միայն
զգայարանների վերայ ազդելու նպատակ ունին.
անուշադրութիւն աւետարանի ու նախնական աւան-
գութեան նկատմամբ, և եկեղեցական իշխանու-
թեան հեղինակութիւնը բարձրացնելու ու փափկա-
նում կենտրոնացնելու մեծ ջանք, սիմոնիականու-
թիւն, սիրոյ ու արգարութեան փոխարէն, և ինչ

«Այս բոլոր պակասութիւնների ու մոլու-
թիւնների դէմ, ասում է նա, որոնք քրիստոնէա-
կան—կրօնական ոգու ծայրահեղ անկման դժբաղդ
նշաններ են, պէտք է բաժրացնենք ես անդադար իմ
ձայնը, իմ մեծաւորները կուզեն թոյլ տան, թէ
չտան, Այդ մոլութիւնները Գերաբրիստոսի ոգու
ներշնչումներ են ու նոցա դէմ մաքառելու համար՝
ես կարիք չունիմ իրաւունք ստանալու ոչ պապից,
ոչ եպիսկոպոսից, Աստուծոյ ու իմ խղճի ձայնն
ինձ բաւական է»:

— Արօնաւորական կարգերը ոչ պակաս ընդար-
ձակ գործունէութիւն ունին եկեղեցւոյ շրջապատից
դուրս և եկեղեցւոյ չվերաբերեալ գործերի մէջ
նաև Փրանսիայում: Աւերջին ժամանակս կատա-
րուած հետախուզութիւններից երևաց, որ բազմա-
թիւ այդպիսի կարգերու ընկերութիւններ արհեստի
ու արդիւնաբերութեան զանազան ճիւղերով են
պարապում. 449 միաբնութիւններ գերծակութեան
արհեստ են բանեցնում: 155 պատրաստում են
յատկապէս տղամարդոց զգեստ. 184 վանքեր գեղե-
րի վաճառանոցներ ունին: 95 վանքեր՝ գեղարան-
ներ, 42-ը լուացքի տներ. ոմանք բուսի ուլունք
են պատրաստում, ուրիշները գարնջուր, խմիչքներ
և ինչ, Ընդամենը 2000 կրօնաւորական հաստատու-
թիւններ կան Փրանսիայում, որոնք այս տեսակ
արդիւնագործութիւններով են զբաղուում և քանի
որ նոցա մէջ ձեռքի աշխատանքը ձրի է, բնակա-
նարար շատ պէտք է դժուարանայ նոցա մրցակից-
ների բանը:

Ահա թէ ինչպիսի պատճառներ ստիպեցին
վերջերս Փրանս. կառավարութեանը խիստ միջոցներ
ձեռք առնել կրօն. կարգերի դէմ, մինչև իսկ պա-
հանջողներ եղան Ազգ. խորհրդարանում, որ բոլոր
վանքերը փակուին: Պապի առանձին շրջաբերակա-
նով հրատարակած բողոքն այդ խտտութիւնների
դէմ անհետեւանք մնաց:

— Հոռմից իրրե մի կարեւոր լուր հաղորդում
են, որ Լեոն ԺԳ. երկու տարի իւր սննեակներում
փակուած մնալուց յետոյ մի ամբողջ օր Վատիկանի
պարտիզում է անցրել, նա խոստացած է եղել իւր

բժիշկներին, որոնք կէս տարի առաջ յաջող անդամահաստութիւն կառարելով նպաստեցին նորա առողջութեան վերականգնելուն, նախաճաշի հրաւիրել, և կառարեց խոստումը: Այդպիսով առաջին անգամ իւր իշխանութեան օրով նա կողմնակի անձանց հացի էր հրաւիրում: Բայց ընդունուած սովորութեան համեմատ հրաւիրելները առանձին սեղան պէտք է նստէին. իսկ պապի սեղանը բաժանուած էր վարդապետի, Ա. Կաթիկոսի, վերջերս պապի հրամանով պաշտօնեաների մեծ փոփոխութիւններ են եղել:

ՄԱՅՐ ԸԹՈՒ

Վ. Ե. Լ. ՓԱՌ. ԼԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՎԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը յուլիս 16-ին կրկին անգամ ուղիււորուեց զէպի Հաղարծին, Երեւանի վրայով կառքով: Նորին Վեհափառութեան ուղեկցում էին Գեր. Մաղաքիա եպիսկոպոս, Մ. Աթոռի տպարանի տեսուչ և ձեմարանի ուսուցիչ Բար. Եղնիկ վարդապետ և ձեռք. Սմբատ սարկաւազ: Այլ և Պարիզում Վեհ. Հայրապետի խնամք, մեծ յաջողութեամբ նկարչութիւն ուսանող պ. Թերլեմեզեան, որի մի նկարը այս տարի ցուցահանդէսում մրցանակի է արժանացել*: Նորին Սրբութիւնն առանց երկար կանգ առնելու Երեւանում, նոյն օրն և եթ շարունակեց ձանապարհը և Ելինովկայում պ. Ետրալեանի հիւրամեծար տանը զիշերելով յաջորդ առաւօտ Սեան անցաւ: Այդտեղ երկու օր մնալուց յետոյ 19-ին մեկնեց զէպի Նիկիջան, ուր բաժանուեցան Տ. Եղնիկ վարդապետ, մի քանի շաբաթով իւր հայրենի Նուշի քաղաքը գնալու համար, և ձեռք. Սմբատ սարկաւազ, որ պէտք է շարունակէ ուսումը Ս. Պետերբուրգի համալսարան-

նում: Ապա նոյն օրը երկկողման գէտ Վեհ. Հայրապետը միւս ուղեկիցներին հետ Հաղարծին գնաց: Այս վանքից Նորին Սրբութիւնը կլաւ շաբաթ օր յուլիս 21-ին և, Մեծ Վաթարկիսայում զիշերելով, յաջորդ առաւօտ շոգեկառքով Աղէքսանդրապոլ հասաւ, ուր գտնուում էր նաեւ կարծ միջոցաւ այցելութիւն եկած Երեւանի թեմի առաջնորդական փոխանորդ Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս: Յաջորդ օրը Նորին Վեհափառութիւնը նախկին ուղեկիցներին հետ կէս կառքով կէս ձիով Հառիձու վանքը գնաց, ուր չորս օր անցրեց: Այստեղ Վեհափառ Հայրապետի ուղեկիցների թուում աւելացաւ նաեւ ձեմարանի տեսչի օգնական և ուսուցիչ Տ. Յուսիկ վարդապետ, որ Հառիձ ամարանոց ուղարկուած աշակերտներին վերահսկում էր և մի քանի օրով առանձին յանձնարարութեամբ Տփլիս էր գնացել: Ուրբաթ, յուլիս 27-ին Նորին Վեհափառութիւնը մեկնեց Հառիձից և, Բաշ-Արարանում զիշերելով, յաջորդ օրը երկու յեան ուշ Մ. Աթոռ ժամանեց:

Նորին Սրբութիւնը օդոստոս 7-ին նորից զէպի Հաղարծին ուղևորուեց, այս անգամ ձիով, Բջնու վերայից՝ զիւանապետ Տ. Եփրեմ վարդապետի ուղեկցութեամբ:

Այս ժամանակամիջոցում Վեհափառ Հայրապետը բարեհաճել է մի անգամ ևս երկու օրով Բիւրականի ամարանոցը գնալ հանգստանալու:

Մ. Աթոռ վերադարձաւ մի քանի շաբաթ Ս. Գեղարդի վանքում մնալուց յետոյ Սինօղի անգամ բարձր. Միթիմար վարդապետ, որից յետոյ կարծ ժամանակ ևս Սինօղի անգամ Գեր. Յուսիկ եպիսկոպոսն անցրեց նոյն վանքում և վերադարձաւ:

* Պ. Թերլեմեզեանից առաջ Մ. Աթոռ եկել էր և ամառակէս մնաց յայտնի նկարիչ պ. Ֆեթիսաճեան, որ Նորին Վեհափառութեան յանձնարարութեամբ Երեք ընդօրինակութիւններ տուաւ անուանի նկարիչների գործերից:

Մ. Աթոռ է եկել Տ. Մետրոփ վարդապետ, որ անցաւ ձմեռ Ս. Պետերբուրգում, յաջողութեամբ մագիստրանտի քննութիւն բռնեց և այժմ զբաղուած է Մ. Աթոռի մասնաշաբանի ձեռագիր Աստուածաշունչների ուսումն-